

Լուսինե Ս. Սահակյան
բանաս. գիտ. թեկնածու

**ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՐՔԱՅՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ**

Էնվեր փաշայի 1916թ. հունվարի 5-ի հրամանագիրը *

Տեղանունները լեզվական համեմատաբար կայուն փաստ լինելուց բացի՝ ունեն պատմաքաղաքական մեծ արժեք: Լավ հասկանալով նրանց ռազմավարական նշանակությունը, Օսմանյան կայսրության, հետագայում նաև՝ հանրապետական Թուրքիայի ղեկավար շրջանակները հետևողական քաղաքականություն են վարել իրենց կողմից նվաճված երկրների, քաղաքների, գյուղերի անուններն աղավաղելու և դրանք զանազան միջոցներով սեփականացնելու ուղղությամբ: Սակայն, ի տարբերություն բազմաթիվ այլ, հիմնականում՝ պատմական ժողովուրդների, Հայաստանն ու հայությունը խորհրդանշող տեղանունները ջնջելու քաղաքականությունը Թուրքիայի կողմից իրականացվել է ոչ միայն տեղաբնիկների պատմական ու մշակութային ժառանգության յուրացման՝ համապետական ընդհանուր առաջադրանքի, այլև իր պատմական հողերի վրա համառորեն ապրող ու ստեղծագործող հանրության բնաջնջման ու հայրենագրկման անմիջական նպատակադրումի համատեքստում: Ուստի, հայկական տեղանունների նենգափոխման քաղաքականությունը եղել է Հայոց ցեղասպանության քաղաքականության կարևոր բաղկացուցիչներից մեկը:

Ժամանակակից Թուրքիայում հայկական տեղանունների ձևախեղման ավանդույթը դարերի պատմություն ունի: Սկզբնական շրջանում այս գործընթացը տարերային բնույթ է ունեցել և պայմանավորվել է թուրքական ցեղերի՝ Հայկական լեռնաշխարհ ներթափանցելու փաստով: Ինչպես իրավացիորեն նկատել են «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» հեղինակները, հայկական տեղանունները «ամենից շատ փոփոխել ու աղավաղել են թուրքական ցեղերն ու ժողովուրդները: Սկզբնական շրջանում լինելով վաչկատուն անասնապահներ՝ նրանք առաջին հերթին կամայական անուններ են տվել լեռներին ու սարերին, սարահարթերին, գետերին

ԻԿ(Ը) տարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական համոզես

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.10.2009:

ու գետակներին»¹:

Հայկական լեռնաշխարհում հաստատված թուրքական ցեղերը, հետագայում էլ Օսմանյան իշխանությունները նորանված տարածքները յուրացնելու նպատակով բնիկ տեղանունը կամ թարգմանում էին խոսակցական թուրքերենի, ինչպես Տանձուտը՝ Արմուդլու, Աղբյուրաշենը՝ Քյանքենդի, Կարմրիկը՝ Քըզըլջա և այլն, կամ էլ տեղական բարբառի ազդեցությամբ նախկին ձևից որոշ չափով հեռացած տեղանունը բաղաբնույթյան (կոնտամինացիա) սկզբունքով նմանեցնում էին թուրքական այս կամ այն բառին, այսպես՝ Արմտիքը դարձնում Արմուդի, Օձունխաչը՝ Ուզունհաչ, Օձունը՝ Ուզունլար², Կյուրուպաղատին՝ Կյուրբաղը, Քարհատվանը՝ Քարադիվան, Ճղոպուրկենցը՝ Չյուփուրգենս, Բասենը՝ Փասինլեր և այլն:

Տարածված մեթոդներից էր նաև հին բնակավայրերին նոր անուններ տալը՝ ձգտելով մոռացության մատնել նրանց բնիկ պատկանելությունը³: Անվանափոխվում էին նույնիսկ քրիստոնեական սրբավայրերը. օրինակ՝ նշանավոր Վարագավանքը կոչվել է Եղիքիլիսեի (յոթ եկեղեցի): Ի դեպ՝ մեր հաշվարկներով Արևմտյան և Արևելյան Հայաստանում եղել են քիլիսե (եկեղեցի) բառով մի քանի տասնյակ բնակավայրեր, մի այդքան էլ՝ Գարաքիլիսե անունով: Կան նաև՝ Ակքիլիսե (սպիտակ եկեղեցի), Կզըլքիլիսե (կարմիր եկեղեցի), Ուչքիլիսե (երեք եկեղեցի) և այլն: Փաստորեն այս նոր թուրքերեն անվանումները մոռացության են մատնել հին տեղանունները:

Հայկական տեղանունների յուրացման ձևեր էին նաև թուրքերենով դրանք ստուգաբանելու փորձերը: Նման կեղծ վարժանքներով առանձնապես զբաղվել է 17-րդ դարի օսմանյան արքունի պատմագիր Էվլիյա Չելեբին, որի մեկնությունները հաճախ հիմք են դարձել թուրք մասնագետների համար: Օրինակ՝ իր «Ուղեգրության» մեջ հնագույն հայկական **Բայբերդ** կամ **Բաբերդ** տեղանունը (որը բարբառի և օտար լեզվական շերտերի ազդեցությամբ հնչյունափոխվել է **Բայբուրդի**) նա ստուգաբանում է թուրքերենով՝ բայ (հարուստ)+յուրդ (բնակատեղի)⁴: Տեղանվան մեջ, սակայն, առկա են վաղնջահայկական **Բայ+բերդ** բաղադրիչները: Բայ նշանակում է որջ, անառիկ թաքստոց, իսկ բերդ՝ պարիսպներով շրջապատված ամրություն, ամրոց: Նման բաղադրիչով տեղանունները տարածված են ողջ Հայաստանում՝ Յամաքաբերդ, Ամբերդ, Վժնաբերդ, Խարբերդ, Բաղաբերդ և այլն⁵:

Թուրք պատմագրի երևակայությունը սրանով չի սահմանափակվել. ըստ նրա՝ բնիկ հայկական Ճորոխ գետանունը Ջուի-ռուի «հոգու գետ» թուրքական

1 Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Սելիք-Բախշյան, Գ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. I, էր., 1986, էջ XII:

2 Վկայված է նաև **Օծուն**, **Օզուն**, **Ածուն**, **Ուծուն** և այլ տարբերակներով: Թուրքերը հայերեն «օ» հնչյունի աղավաղմամբ և թուրքերեն ստուգաբանությամբ այն դարձրել են Ուզունլար (տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 5, 2001, էջ 474):

3 Տե՛ս Լ. Սահակյան, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, «Լուսակն» հրատ., էր. 2007, էջ 83-84:

4 Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Էվլիյա Չելեբի», թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Խ. Սաֆրաստյանի, հ. 4, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էր., 1967, էջ 127:

5 Բաբերդ տեղանվան ստուգաբանության մասին մանրամասն տե՛ս Լ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 130-131:

բառերի աղավաղված ձևն է⁶: Իրականում՝ ճորոխ անունը կազմավորվել է հայերեն ծորել-ծորող բառից՝ ծ>ճ հնչյունափոխությամբ, մի երևույթ, որը հատկանշական է հայերենին, ինչպես՝ ծանել>ճանաչել, ծխնի>ճխնի⁷: Երվանդունիների կառուցած Չարիշատ բերդի անունը նա կապում էր աջեմների (այսինքն՝ պարսիկների) հետ⁸, Այն քաղաքի անունը՝ հույն կայսրերից մեկի՝ Էզին անունով դատեր անվան հետ⁹: Նշենք, որ ակն-ը բնիկ հայկական բառ է և նշանակում է աչք, աղբյուր, փոս¹⁰: Փերթեք տեղանվան մեջ, որը Բերդակի բարբառային տարբերակն է, Էվլիյա Չելեբին փնտրում էր մոնղոլերեն արծիվ բառը¹¹:

Իրականում, վերոնշյալ, ինչպես նաև Հայաստանի բազմաթիվ այլ տեղանուններ պատմական աղբյուրներում շատ ավելի վաղ են արձանագրվել, քան թուրքական կամ քրդական տարրը հայտնվել է Հայկական լեռնաշխարհում:

Չելեբիի այս ճշգրտումները ստուգաբանական անմեղ ճամարտակություններ չէին, այլ հետապնդում էին նոր գրավված տարածքների թուրքականությունը հաստատելու հեռագնա նպատակներ: Այս պատմագիրը վարել է պետական պաշտոններ, մասնակցել օսմանյան նվաճողական արշավանքներին, ուստի ակնհայտ է, որ նրա տեղանվանական բացատրություններն ունեին քաղաքական դրդապատճառներ:

19-րդ դարի կեսերից թուրքական իշխանությունները որոշում են ոչ միայն անվանափոխել կամ աղավաղել հայկական նահանգների, գավառների, գյուղերի անունները, այլև իսպառ ոչնչացնել Հայաստան անունը, որի առկայությունը՝ իրենց նվաճած երկրների շարքում, նրանք արձանագրում էին դարեր շարունակ (տե՛ս քարտեզը, էջ 92): Այս քաղաքականությունը գործադրվեց հատկապես 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ միջազգային դիվանագիտության օրակարգ մտավ Հայկական հարցը:

Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի կառավարությունը Հայաստան անունը փորձեց փոխարինել հնարավոր Բրդատան կամ Անատոլիա հասկացություններով: 1880 թվականից սկսած՝ պաշտոնական փաստաթղթերում արգելվեց Հայաստան անվան հիշատակումը¹²: Սրանով Բարձր Դուռը ձգտում էր արևմտյան տերություններին հասկացնել, որ Հայկական հարց գոյություն չունի, քանզի եթե չկա Հայաստան, չկա նաև Հայկական հարց: Պատմաբաններին վաղուց արդեն հայտնի է Անգլիայի օգնությամբ այդ հարցի լուծման՝ մեծ վեզիր Բյասմիլի փաշայի ծրագիրը:

«Եթէ Եւրոպիոյ մասին մէջ մեր ծոցը օձ սնուցինք (նկատի ուներ բալկանյան ժողովուրդներին- Լ. Ս.), պէտք չէ որ նոյն յիմարութիւնն ընենք մեր Ասիական Տաճկաստանի մէջ. խելօքութիւնը ջնջել վերցնել է այս ամեն տարերքը որ օր մը կրնան մեզ նոյն վտանգը ծնանիլ և օտարին

6 Տե՛ս Թուրքական աղբյուրները, Էվլիյա Չելեբի, նույն տեղում:
7 Տե՛ս Թուրքական աղբյուրները, Էվլիյա Չելեբի, հ. 9, էջ 120:
8 Տե՛ս Դ. Աճառյան, Գայերեն արմատական բառարան, հ. Բ, ԵՊՅ հրատ., Եր., 1973, էջ 469, տե՛ս նաև «Նոր բառգիրք հայկազգեան լեզուի», հ. Ա., ԵՊՅ հրատ., Եր., 1981, էջ 1026:
9 Տե՛ս Թուրքական աղբյուրները, Էվլիյա Չելեբի, հ. 9, էջ 155:
10 Տե՛ս Դ. Աճառյան, Գայերեն արմատական բառարան, հ. Ա, ԵՊՅ հրատ., Եր., 1971, էջ 106-108:
11 Տե՛ս Թուրքական աղբյուրները, Էվլիյա Չելեբի, հ. 9, էջ 157:
12 Տե՛ս Գայ ժողովրդի պատմություն, ԶՍՄ ԳԱ հրատ., հ. 6., Եր., 1981, էջ 137, տե՛ս նաև՝ Новая история Армении в трудах современных зарубежных авторов, отв. редактор Р. Г. Саакян, Ереван, 1993, с. 15.

Ի(Ը) փարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական համոթն

ձեռնամխութեան առիթ և գործիք լինի: Հիմա, այս օր, գոնէ Անգլիոյ շահերն կը պահանջեն որ Փոքր Ասիոյ (մենք և Անգլիա Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարին միջամտութենէն և միջամտութեան ամեն առիթներէն. ուստի այդ սուրբ նպատակին համար պետք է և պետական իրաւունք կը պահանջէ որ որևէ կասկածելի տարր անպէտ ընենք, որպէս զի ապագայն ապահովենք, ուրեմն այդ հայ ազգն վերցնելու, անհետ և անճետ ընելու ենք»¹³:

Միտումնավոր աղավաղումների միջոցով օսմանյան իշխանությունները հայկական և հունական անուններին վերագրում էին թուրքական կամ քրդական ծագում: Տվյալ շրջափուլում օգտագործվում էր քրդական գործոնը, որը կայսրության համար վտանգավոր չէր համարվում: Սուլթան Աբդուլ Համիդը, որը հայտնի էր նաև «Քրդերի հայր» (Bâve Kurda) անունով¹⁴, օգտագործելով նրանց կրոնական մոլեռանդությունը, թուրքական կանոնավոր բանակի և քուրդ հրոսակներից կազմված «համիդիեների» միջոցով կազմակերպեց 1890-ական թթ. հայկական կոտորածները:

Աբդուլ Համիդի օրոք թուրք կամ քուրդ գաղթականներով վերաբնակեցված վայրերի հին անունները փոխարինվում էին նորերով. դրանք սուլթանների կամ էլ թափառական ցեղերի անուններ էին՝ Համիդիե, Ռեշիդիե, Ազիզիե, Մահմուդիե: Սակայն այս քաղաքականությունը հատկապես ակնառու դարձավ երիտթուրքերի իշխանության օրոք: Նրանք օսմանյան սուլթանների անունները կրող, ինչպես նաև նախաօսմանյան շրջանին պատկանող տեղանունները փոխարինեցին իրենց անուններով՝ Էնվերիե, Շևքեթիե, Մահմուշևքեթփաշա և այլն¹⁵:

Երիտթուրքական իշխանությունները նույնպես չափազանց կարևորում էին «ոչ մահմեդական» տեղանունները վերափոխելու գործը: Կայսրությունում տեղանունների համակարգված թուրքացմանն էր նպատակաուղղված 1913թ. մայիսի 13-ին ընդունված “Գաղթականների բնակեցման կանոնադրություն” (“İskân-ı Muhacirin Nizamnâmesi”) փաստաթուղթը¹⁶: Հաջորդ քայլը կատարեց երիտթուրքերի կառավարության ռազմական նախարար Էնվեր փաշան՝ 1916թ. հունվարի 5-ին:՝

Հատկանշական է, որ հետագայում թուրք պատմաբան Այշե Հյուրը հաստատել է պատերազմական ժամանակաշրջանում ոչ թուրքական անունների համակարգված փոփոխության միջոցառումների արագացման փաստը¹⁷ (նկատի ունեն Առաջին համաշխարհային պատերազմը- Լ. Ս.):

Թուրքական ռազմաքաղաքական իշխանություններին առաքված Էնվեր փաշայի հրամանագիրը պահանջում էր Օսմանյան կայսրության հայերեն, հունարեն և բուլղարերեն տեղանունները փոխել թուրքերենի¹⁸:

13 Ծերենց, Ազգային տեսութիւն. Օսմանյան ինքնակալութիւն, տաճկահայք եւ ռուսահայք, «Փորձ», Տփլիսի, 1879, N VII-VIII, էջ 204-205: Տե՛ս նաև Новая история Армении в трудах современных зарубежных авторов, с. 17.

14 Տե՛ս Nuri Frat, Vulpes Kurdistanica, “Günlük”, Istanbul, 7.8.2009, (www.gunlukgazetesi.com).

15 Տե՛ս Nuri Frat, նույն տեղում:

16 Տե՛ս Ayşe Hür, Tez zamanda yer isimleri değiştirile, “Taraf”, Istanbul, 01.03.2009.

17 Տե՛ս Bin Yerin İsmi Değiştii, Hangi İsim Hangi Dile ait? www.kenthaber.com/Haber/Genel/Dosya/gundem/28-bin-yerin-ismi-degişti.

18 Տե՛ս A. Yüksel, Doğu Karadeniz Araştırmaları, İstanbul, 2005, ss. 21-22.

Ոգևորվելով Էնվերի հրամանագրով՝ թուրք հայտնի զինվորական Հուսեյին Ավնի (Ալփարալան) բեյը, որը նաև թուրքերեն լեզվի և թուրքական մշակույթի մասին հողվածների հեղինակ էր, գրում էր. «Եթե մենք ուզում ենք մեր երկրի տերը դառնալ, ապա ամենավորը գյուղի անունն անգամ պետք է թուրքերեն դարձնենք, այլ ոչ թե թողնենք հայերեն, հունարեն, արաբերեն: Այսպիսով՝ մեր երկիրը կներկենք մեր գույներով»¹⁹:

Ինչպես տեսնում ենք, սա իր նախարարից էլ մեկ քայլ առաջ էր անցնում և անհրաժեշտ համարում նաև արաբերեն տեղանունների անվանափոխությունը, թեև Էնվեր փաշայի հրամանագրում խոսքը վերաբերում էր միայն հայ, հույն, բուլղար և այլ ոչ մահմեդական ժողովուրդներին: Սա նաև վկայում է, որ կայսրության շրջանում՝ մահմեդականների խալիֆը համարվող սուլթանի տիրապետության ժամանակ, արաբական և քրդական տեղանուններն իշխանությունների համար առանձնապես վտանգավոր չեն համարվել: Սակայն, չնռանանք, որ տվյալ դեպքում Արևմտյան Հայաստանի տարածքում քրդերով վերաբնակեցված վայրերի անունները ճնշող մեծամասնությամբ եղել են հայկական՝ տեղական բարբառային կամ օտար լեզվական նստվածքով: Ուստի պատահական չէ, որ Մեծ եղեռնից հետո այդ տեղանունները հաճախ վերագրվել են քրդերին: Դրա վառ ասպացույցն է Բիթլիսում Թուրքիայի նախագահ Աբդուլլա Գյուլի վերջերս հնչեցրած տարօրինակ հայտարարությունը, երբ նա մաքուր հայկական Նորչեն-Նորչին տեղանունը ներկայացրել է իբրև քրդական²⁰:

Առաջին աշխարհամարտի տարիներին առաջին հերթին թուրքացվեցին հայկական, հունական, բուլղարական տեղանունները: Օրինակ՝ Բուրսայի Անթրանոս կազան վերանվանվեց Օրհանեյի, Սիխալիչը՝ Կարաջաբեյի, Կայսերիին ենթակա Դիմիտրի գյուղը՝ Թուրանի, Չորումի Ռում անունով գյուղը՝ Ենի (նոր) Չամլըջայի: Սակայն մի քան ամիս անց՝ 1916թ. հունիսի 15-ին, օսմանյան Գլխավոր շտաբը առարկեց տեղանունների նման փոփոխությանը, քանի որ քարտեզները կարդալիս և ռազմական գրագրություններ կազմելիս նոր տեղանունները զինվորականների համար խառնաշփոթ էին առաջացնում²¹:

Արևմտյան Հայաստանը գրկվելով իր իսկական տերերից, պատմամշակութային բազմաթիվ արժեքների հետ շարունակում է ամեն օր կորցնել նաև հազարամյակների խորքից եկած հայկական տեղանունները: Դրանք հայտարարվում են քրդական կամ էլ՝ թուրքական: Թուրք պատմաբան Հ. Թունչելը «Վաթան» թերթի լրագրող Շուլե Թյուրքերին տված հարցազրույցում խոստովանել է, որ «Թուրքիայում չկա մի այնպիսի աշխատություն, որը քննի հին անունների արմատները: Այս աշխատանքի համար հարկավոր է թուրքերենի, պարսկերենի, արաբերենի, հայերենի, զազայերենի, կուրմանջի, ասորաարամերենի, շումերերենի, արքադերենի, տեղական բարբառների իմացություն, ...քանի որ քրդերեն համարվող անունն իրականում կարող է լինել շումերերեն, արքադերեն կամ թուրքերեն, ինչպես նաև թուրքերեն համարվող տեղանունը կարող է լինել արաբերեն, հայերեն կամ էլ արքադերեն»²²:

19 H. Tirebolulu [Huseyin Avni] Alparslan, Trabzon İli Lâz mı? Türk mü? Giresun, 1339. s. 17.
20 Տե՛ս Kadir Konuksever, “Kürt açılımı ve Kürt isimleri”, BBC Türkçe, 12 Ağustos, 2009. http://www.bbc.co.uk/turkce/haberler/2009/08/090812_kurdish_names.shtml.
21 Տե՛ս A. Aktar, Yer isimlerini Türkleştirmek..., “Taraf”, İstanbul, 23 Ekim, 2009.
22 Şule Türker, “28 bin yerin ismi değişti, Hangi ismin hangi dile ait olduğu bilinmiyor!”, “Vatan”, 16.08.2009, www.esoyile.com/2009/08/30/28-bin-yerin-ismi-degiшти.

Իսկ ահա 2009թ. հուլիսի 16-ին թուրքական «Վաթան» օրաթերթում հրատարակված «28 հազար տեղանուն փոխվեց: Ո՞ր տեղանունը, ո՞ր լեզվին է պատկանում՝ չի իմացվում»²³ հոդվածի հեղինակ Շուլե Թյուրքերը քրդական տեղանունների շարքին է դասում Վանը, Անթեփը (Այնթափ)²⁴, Խարփեթը (Խարբերդ), Էրզինգանը (Երզնկա), Չերմիզը (Չերմուկ), Կաղզվանը (Կաղզվան), Դերսիմը, Տեկորը, Վեստանը (Ոստան), Գերչանիսը (Կարճնիս), Փալին (Բալու), Ջուլեմերկը (Ջուլամերկ), Բեդլիսը (Բիթլիս) Գոզսին (Կոկսի), Կերսը (Կարս), Փուլուրը (Բլուր), Փերթակը (Բերդակ), Բըղին (Գեղին), Չերմեն (Չերմեն), Քոփը (Կոփ), Չեմիչգեզեթը (Չմչկածագ), Թերջանը (Դերջան), Քենահը (Կամախ), Իսփիրը (Սպեր), Չարուշատը (Չարիշատ), Արթեմեթանը (Արտամեթ), Էրջիշը (Արճեշ), Չեղկանը (Չատկան), Էզինը (Ալն), Քեթանը (Կասան), Ավշինը (Օշին), Սիվերեթը (Սև ավերակ), Ջիրմիթը (Չերմուկ), Մերթը (Սղերդ), Էրիփկիրը (Արաքկիր), Էրխվան-Արգուվանը (Արգավան), Էրգերունը (Էրգրուն) (Արծն+ուն), նույնիսկ՝ Բիլիսը և այլն²⁵: Նշենք նաև, որ հոդվածագիրը համառորեն լռում է այս տեղանունների իսկական տերերի ճակատագրի մասին:

Երիտթուրքերից հետո տեղանունների «ազգայնացման» քաղաքականությունը շարունակեցին քեմալականները: Հանրապետության շրջանում այս գործընթացն էլ ավելի մեծ թափ ստացավ: 1923-ից սկսած Արևմտյան Հայաստանի տարածքը պաշտոնապես կոչվեց Արևելյան Անատոլիա²⁶: Իսկ 1925թ.՝ Շեյխ Սալիդի, 1927-1931թթ.՝ Արարատի քրդական ապստամբություններից և 1936-1938 թթ. Դերսիմի ընդվզումից հետո թուրքական իշխանություններն սկսեցին անվանափոխել նաև քրդերով ու զազաներով բնակեցված վայրերը: Դեռևս 1935թ. Դերսիմը Թունջելի կոչելու մասին մի նախագիծ էր ներկայացրել Ներքին գործերի նախարար Շուքրյու Քայան: Հետաքրքրական է, որ 2009թ. փետրվարին Թունջելիի Ժողովրդավարական հասարակություն կուսակցության (DTP) պատգամավոր Շերաֆեթթին Հալիսը հանդես եկավ Թունջելին կրկին Դերսիմ կոչելու առաջարկով՝ հիմնավորելով, որ ժողովուրդը չի հրաժարվում իր համար արդեն սրբացած Դերսիմ անունից, որն օգտագործվում է թե՛ իրենց առօրյա կյանքում, թե՛ երգերում, պատմություններում ու վեպերում: Պատգամավորի այս առաջարկն Արդարադատության նախարարը որակեց որպես անջատողականության դրսևորում²⁷:

1940թ. Թուրքիայի կառավարությունն ընդունում է օտար լեզուներով ու արմատներով տեղանունները թուրքերենի փոխելու մասին թիվ 8589 շրջաբերականը: Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառով այս գործընթացն առժամանակ կասեցվում է:

1949թ. Նահանգային վարչական օրենքում (İl İdaresi Kanunu) մի առանձին հոդված է նվիրվում տեղանունների փոփոխությանը: 1957թ. ստեղծվում է «Անվանափոխման մասնագիտական կազմակերպությունը» («Ad Değiştirme

23 Şule Türker, նույն տեղում:

24 Հեղինակը նշում է տեղանունների քրդական տարբերակները, իսկ փակագծերում տրվում են բնակավայրերի նախնական անունները:

25 Տե՛ս Şule Türker, նույն տեղում:

26 Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, Եր., 1974, հ. 1, էջ 373: Հայկական համառոտ հանրագիտարան, Եր., 1990, հ. 1, էջ 192-193:

27 Տե՛ս O. Bilir, Tunceli, Dersim Olsun, Tekilfini Ekimde yeniden, “Bir Gün” օրաթերթ, 2009, 19 Ağustos. Տե՛ս նույնի՝ www.birgun.net.

İhtisas Kurulu”», որը Էրզրումի նահանգում վերանվանում է 653, Ադանայում՝ 169, Էրզինջանում (Երզնկա)՝ 366, Ադրյամանում՝ 224, Մուղայում՝ 70, Աֆիոնում՝ 88, Էսֆիշեհիբում՝ 70, Մուշում՝ 297, Ադրբում (Արարատ)՝ 374, Գազիանթեփում (Այնթափ)՝ 279, Նեվշեհիբում՝ 24, Ամասիայում՝ 99, Գիրեսունում (Կերասուն)՝ 167, Նիդդեմ՝ 647, Անկարայում՝ 193, Գյումուշխանեում՝ 343, Օրդում՝ 134, Անթափայում՝ 168, Հաքքարիում՝ 128, Ռիզեում՝ 105, Արդվինում՝ 101, Հաթայում (Ալեքսանդրետա)՝ 117, Սաքարիայում՝ 117, Այդընում՝ 69, Սպարտայում՝ 185, Բալըբեսիբում՝ 110, Իչելում՝ 112, Սիիրթում (Սդերդ)՝ 392, Բիլեջիքում՝ 32, Ստամբուլում՝ 21, Սինոպում՝ 59, Բինգյոլում (Բյուրակն)՝ 247, Իզմիրում (Չմյուռնիա)՝ 68, Սիվասում (Սեբաստիա)՝ 406, Բիթլիսում (Բաղեշ)՝ 236, Կարսում՝ 398, Թեքիրդաղում՝ 19, Քաստանոնիում՝ 295, Թոքթասում (Եվրոկիա)՝ 245, Բուրդուրում՝ 49, Կայսերիում (Կեսարիա)՝ 86, Տրասպիզոնում՝ 390, Բուրսայում՝ 136, Քրքլարեղիում՝ 35, Դերսիմում՝ 273, Չանաքքալեում՝ 53, Քըրշեհիբում՝ 39, Շանլը Ուրֆայում (Ուռհա)՝ 389, Չանքըրըում՝ 76, Քոչասեղիում՝ 26, Ուշաղում՝ 47, Չորումում՝ 555, Մալաթիայում՝ 217, Չոնգուլդաքում՝ 156, Էդիրնեում (Ադրիանապոլիս)՝ 20, Մարդինում՝ 647, Դիարբեքիբում (Ամիդ)՝ 555, Մանիսայում՝ 83, Էլազըղում (Խարբերդ)՝ 383, Քահրաման Մարաշում (Մարաշ)՝ 105 բնակավայր²⁸:

«Անվանափոխման մասնագիտական կազմակերպությունը», ուսումնասիրելով 75 հազար տեղանուն, փոփոխել է 28 հազարը (որից 12 հազարը՝ գյուղանուններ): Հ. Թունջելի հաշվարկներով՝ 1940-2000թթ. ընթացքում վերանվանվել է 12 հազար 211 գյուղանուն՝ գյուղերի մոտավորապես 35%-ը²⁹:

Թուրք պատմաբան Այշե Հյուրը նշում է, որ Ժողովրդավարական կուսակցության կառավարման ընթացքում գեղեցիկ տպավորություն չթողնող, մարդկանց արժանապատվությունը վիրավորող կամ էլ ծաղրանքի առիթ տվող անունները, նույնիսկ եթե թուրքական էին, փոխվեցին: Վերանվանվեցին Քըզըլ (Kızıl-կարմիր), Չան (Çan-գանգ), Քիլիսե (Kilise-եկեղեցի) բառիմաստներ պարունակող գյուղանունները: «Անջատողականությանը» վերջ տալու նպատակով փոխվեցին նաև արաբական, պարսկական, հայկական, քրդական, վրացական, թաթարական, չերքեզական, լազական գյուղանուններ³⁰: 1981-1983թթ. անվանափոխվեցին Թուրքիայի հատկապես արևելյան, հարավային և Սև ծովի հարավարևելյան ափամերձ շրջանների բնակավայրերը:

2009թ. օգոստոսի 19-ին Ստամբուլի «Բիր գյուն» օրաթերթում հրատարակված «Թունջելին թող Դերսիմ կոչվի» հոդվածի հեղինակ Օ. Բիլիրը նշում է, որ թուրքական իշխանությունները բնակավայրերին նոր անուններ տալուց բացի, հին տեղանվան որոշ հնչյունները փոխելով՝ նմանեցնում էին թուրքական այս կամ այն բառին, օրինակ՝ Չինչիվա>Շենյուվա և այլն: Սա անվանափոխության մի մեթոդ է, որը, ինչպես նշել ենք, առաջարկել էր Էնվեր փաշան. «...Էրեղլին անվանել Էրիքլի կամ էլ Էրաքլը, Գալիբոլում՝ Վելիբոլու, այսպիսով, չի խախտվի ընդունված նախկին անվան հիմքը»³¹: Այս երևույթը, սակայն, ունի ավելի հին արմատներ: Դեռևս 16-րդ դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում գրանցված հայկական տեղանուններում նկատելի

28 Տե՛ս Օ. Bilir, նույն տեղում:

29 Տե՛ս H. Tunçel, Türkiye’de İsmi Değiştirilen Köyler, Sosyal Bilimler Dergisi, Fırat Üniversitesi, 2000, cilt 10, sayı 2.

30 Տե՛ս Ş. Türker, նշվ. հոդվ.:

31 Տե՛ս A. Yüksel, Doğu Karadeniz Araştırmaları, İstanbul, 2005, s. 21-22.

են օսմանացման-թուրքացման նմանատիպ օրինակներ³²: Այսպես կոչված՝ քրդական տեղանունների թուրքացման մեջ ներկայումս արձանագրվում է մեկ այլ հետաքրքիր երևույթ. որոշ բնակավայրերի վերադարձվում են իրենց նախկին՝ կարծեցյալ թուրքական անունները: Իսկ դրանք իրականում հայկական են և եկել են դարերի խորքից: Այսպես՝ Փերթազը (Բերդակ) վերանվանվել է իբր՝ իր նախկին թուրքական տարբերակով՝ Փերթեկ, Ըսփըրը (Սպեր)՝ Իսփիր, Էրդեխանը՝ Արդահան, Շախը՝ Շատախ, Քերսը՝ Կարս, Ջեղկանը՝ Էլեշքիրթ (այն Վաղարշակերտ>Ալաշկերտ-ի հնչյունափոխված ձևն է), Գեղին (Կեղին)՝ Քըղի, երկուսի մեջ էլ գյուղ>գեղ բառն է, Գյումգյումը՝ Վարդը³³ և այլն:

Այս շրջայի մեկ օղակն է 2009թ. օգոստոսին Բիթլիսում Թուրքիայի նախագահ Ա. Գյուլի վերը նշված հայտարարությունը, երբ նա ներկայիս Գյուրոյմաք գավառի իսկական անունը՝ Նորշինը, հայտարարեց որպես քրդական³⁴: Ինչ վերաբերում է Նորշինին, ապա ակնհայտ է, որ այն մաքուր հայկական է թե՛ իր բաղադրիչներով՝ Նոր+շեն, թե՛ տեղանվանակազմ կաղապարածևով: Ընդհանրապես՝ շեն (կառույց, գյուղ, բնակատեղի) բաղադրիչով տեղանունները զուտ հայկական են: Հետաքրքրական է, սակայն, որ Ա. Գյուլի այս հայտարարությունը միանշանակ չընդունվեց երկրի քաղաքական ուժերի կողմից: Մասնավորապես՝ ընդդիմադիր «Ազգային շարժում» կուսակցության առաջնորդ Դևլեթ Բահչելին այս առիթով քննադատեց Ա. Գյուլին: Իսկ ահա Դ. Բահչելիին հակադարձեց վարչապետ Ռ. Էրդողանը՝ նրան խորհուրդ տալով մի քանի գրքեր կարդալ և հիշեցրեց, որ օրինակ՝ Մանազկերտը հայկական տեղանուն է: «Ալփարսլանը 1071թ. Մանազկերտի հաղթանակով Անատոլիայի դռները բացեց, սակայն Մանազկերտ անվանը ձեռք չտվեց: Դուք Ալփարսլանից ավելի՞ ազգայնական եք: Մուսթաֆա Քեմալն, Անկարան մայրաքաղաք դարձնելով, անունը չփոխեց: Անկարա անունը լատինական ծագում ունի: Դուք Մուսթաֆա Քեմալից ավելի՞ ազգայնական եք»³⁵, - հարց է տվել Ռ. Էրդողանը: Կարծում ենք, որ Թուրքիայի վարչապետի այս խոստովանությունը պայմանավորված է նրանով, որ թուրքական իշխանությունները ձգտում են անհեթեթ վիճակում չհայտնվել և աշխարհին ժողովրդավար ու ազատամիտ երևալ: Բացի այդ՝ թերևս նման հայտարարությունն ուղղված էր քրդերի տարածքային հավակնությունները նաև այս ձևով զսպելուն:

Հանրապետական Թուրքիայում «ոչ մահմեդական» տեղանունների փոփոխման, աղավաղման և յուրացման համակարգված ծրագրին մեծապես օժանդակել և «գիտական» հիմքերի վրա դնելու փորձեր է արել թուրքական պատմագիտությունը: Թուրք պատմաբանները, վաղ շրջանի օսմանյան արխիվային նյութերը, պատմագիրների երկերը հրատարակելիս, օգտագործելով իրենց կեղծարարական հարուստ զինանոցը, աղճատել են հայկական անունները³⁶: Հետին թվով՝ բիրտ խմբագրությամբ, Արմենիան կամ Էրմենիս-

32 Ավելի մանրամասն տես՝ Լ. Սահակյան, Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, էջ 77-108:

33 Տես՝ Օ. Bilir, Tunceli, Dersim Olsun, Tekilfini Ekimde yeniden, “Bir Gün”, 19 Ağustos, 2009. Տես նույնի՝ www.birgun.net.

34 Տես՝ A. Muradoğlu, A. Mesut ve Norşin..., “Yeni Şafak”, օրաթերթ, 11. Ağustos, 2009: Enver Alper Güvelin, Norşin: Psikolojik eşjiğin aşılması, Yeni Şafak, օրաթերթ, 16.08.2009:

35 Erdoğan Bahçeli’ye yeni sert sözlerle yüklendi, “Hürriyet”, 10 Kasım, 2009:

36 Տես՝ Լ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 71-108, 130-135:

տանը փոխարինել են հնարովի Արևելյան Անատոլիայով՝ նպատակ ունենալով մոռացության մատնել Հայաստան երկրի գոյությունն առհասարակ: Այսպես, թուրք պատմաբան Հ. Սելենը, XVII դարի հայտնի պատմագիր Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյուման» 1957 թվականին հրատարակելիս, այդ պատմական երկի «Արմենիա երկրի մասին» գլխի վերնագիրն ուղղակի դարձրել է «Արևելյան Անատոլիա»³⁷:

Սակայն փաստն այն է, որ օսմանյան պատմագիր-տարեգիրների երկերում հստակորեն հիշատակվել է հենց Հայաստան՝ Արմենիա երկիրն իր սահմաններով հանդերձ: Ահավասիկ Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյուման»-ի վերոհիշյալ երկից մեկ հատված, որը լավագույնս բացահայտում է ժամանակակից թուրք պատմագիտության կեղծարարությունները.

«Համդուլլահն ասում է. Արմենի [Արմենիա] վիլայեթը բաղկացած է երկու մասից՝ Փոքր և Մեծ: ... Մեծ Արմենիան Իրանի սահմանների մեջ է մտնում և հայտնի է Թուման Ախլաթ անունով: Սահմաններն են Փոքր Արմենիան, Ռումը, Դիարբեքիրը, Քուրդիստանը, Ադրբեջանը³⁸ և Արանը: Երկարությունը Էրզեն էլ Ռումից (Էրզրում) հասնում է մինչև Սալմաս, իսկ լայնությունը՝ Արանից մինչև Ախլաթի վիլայեթի վերջավորությունը: Մայրաքաղաքը Ախլաթն է: ... Նվաստիս կարծիքով, ներկայումս Մեծ Արմենիան բաղկացած է Վանի և Էրզրումի վիլայթներից, իսկ Փոքր Արմենիան՝ Ադանայի և Մարաշի էյալեթներից: ... Թակվիմ-ալ-Բուլղանում³⁹, որպես Արմենիայի քաղաքներ են հիշատակված Էլբիստանը⁴⁰ Ադանան, Արճեշը, Ադրբեջանը [Ադրբեջան], Բիթլիսը, Բարդան, Բիլեկանը, Թիֆլիսը, Ախլաթը, Դեբիլը, Սուլթանիյեն, Սիսը, Թարսուսը, Մալաթիան, Վանը, Ոստանը, Մուշը, Էրզեն էլ-Ռումը և Մալազկետը»⁴¹:

Թեև Չելեբիի տված Արմենիա երկրի սահմանների ընդգրկումները թերի են⁴², այդուհանդերձ օսմանյան պատմագրի կողմից Հայաստան երկրի (Արմենիա) անվան ընդունումը չափազանց արժեքավոր է: Ի դեպ, Արմենիա ընդարձակ երկրի մասին գրում է նաև նույն դարի մեկ ուրիշ թուրք պատմիչ՝ Մյունեջջիմ Բաշին⁴³: Նա որպես Հայաստանի քաղաքներ է հիշատակում Խըրը Բըրթը (իմա՝ Խարբերդը- Լ. Ս.), Երզնկան, Մուշը, Էզինը (իմա՝ Էրզրումը), Մելազջեդը (իմա՝ Մանազկետը), Բիթլիսը, Ախլաթը, Արճեշը, Ոստանը, Շիրվանը և մայրաքաղաք Դեբիլը (իմա՝ Դվինը)⁴⁴:

Պատմիչների նկարագրություններից պարզորոշ երևում է, որ XVII դարում օսմանյան պաշտոնական պատմագրությունը ճանաչում էր զավթված Մեծ Հայքի գոյության փաստը և այն անվանում իր միջազգայնորեն ճանաչված անունով՝ Արմենիա: Իսկ Կիլիկիան՝ Ադանա և Մարաշ էյալեթներով նրանք

37 Մանրամասն տես Ա. Փափագյան, նշվ. աշխ., էջ 125:
38 Ադրբեջան-Ատրպատական:
39 «Թաքվիմ-ալ-Բուլղանը» արաբ պատմագիր և աշխարհագրագետ Աբուլ Ֆիդայի տարեցույցն է, որը Քյաթիբ Չելեբիի համար ծանայել է որպես սկզբնաղբյուր («Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Բ, Եր., 1964, էջ 258):
40 Էլբիստան-Ալբիստան՝ քաղաք Կիլիկիայում, Մարաշ գավառի Ձեյթուն գավառակում:
41 Թուրքական աղբյուրները..., հ. ք., Քյաթիբ Չելեբի, Ջիհան նյուման, էջ 29-30:
42 Տես նաև Ա. Փափագյան, Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Եր., 1999, էջ 122-114, 121-122:
43 Տես Թուրքական աղբյուրները..., Մյունեջջիմ Բաշի, հ. Բ, էջ 183:
44 Տես նույն տեղում, էջ 199-200: Արաբական և թուրքական աղբյուրներում Դվին տեղանունն աղավաղվել է և գրանցվել մի քանի ձևերով՝ Դեբիլ, տես «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, Եր., 1988, էջ 68, ինչպես նաև՝ Դուլին, Դաբիլ, Ադաբին, Դուվիյ, տես Ա. Վարդանյան, Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, 1995, էջ 109):

ընդունում էին որպես Փոքր Հայաստան (Հայք): Այսպիսով, XVII դարում, երբ միջազգային դիվանագիտության օրակարգում չկար Հայկական հարցը, Հայաստանի պարագայում Անատոլիա կամ Արևելյան Անատոլիա հասկացությունները բնավ չեն գործածվել: Ավելին, XVI դարի «Իսլամական աշխարհացույց» քարտեզում⁴⁵ և անգամ՝ XVIII-XIX դարերի օսմանյան քարտեզներում նույնպես, Հայաստան երկիրը հստակորեն նշվում է Էրմենիստան ձևով՝ իր սահմաններով ու քաղաքներով հանդերձ⁴⁶:



Ուլիյան Ֆեյդընի 1797թ. Լոնդոնում հրատարակած «Ընդհանուր ատլասի հիման վրա 1803/4թ. 4. Պոլսում օսմաներենով տպագրված քարտեզից հատված: Երջանակով առանձնացրել ենք օսմաներենով Հայաստանի անվանումը՝ Էրմենիստան: (տե՛ս Ռ. Գալչեան, Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005, էջ 228):

Ինչպես տեսնում ենք, թուրք պատմիչները լավ գիտեին Հայաստանի՝ Արմենիայի տեղը և ի հակադրություն այսօրվա թուրք պատմաբանների՝ այն չէին «շփոթում» Անատոլիայի հետ:

Ի դեպ՝ Անատոլիա բառը հունարեն նշանակում է ուղղակի՝ արևելք: Այսպես է կոչվել Փոքր Ասիա թերակղզու արևմտյան մասը: Այդ անվանակոչումը տեղի է ունեցել վաղնջական շրջանից: Օսմանյան կայսրությունում նույնպես ժամանակին Անադոլու կոչվում էր Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան հատվածն

45 «Իսլամական աշխարհացույց» քարտեզը կազմվել է 1570-ական թթ., տրամագիծը՝ 28.5 սմ, պահպանվում է Բողյան գրադարանում, Օքսֆորդ-Չեռ. or.317 f9v-10r (տե՛ս Ռ. Գալչեան, Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Եր., 2005, էջ 148):

46 «Ասիական Թուրքիա», հրատարակվել է 1803/1804թ., չափսերը 72654 սմ, Բրիտանական գրադարան, Լոնդոն-OIOC 14999.h.2(2), f.18, «Միջերկրական շրջան»-ի երկրորդ քարտեզ, չափսերը՝ 80658 սմ, Բրիտանական գրադարան, Լոնդոն-OIOC 14999.h.2(2),f.5., «Օսմանյան երկիր», տպագրվել է 1867թ., չափսերը 42629 սմ, Բրիտանական գրադարան, Լոնդոն-Maps 42.d.1, f.2 (տե՛ս Ռ. Գալչեան, նշվ. աշխ., էջ 226, 240, 246):

ընդգրկող վիլայեթը՝ Զյոթսահյա կենտրոնով⁴⁷: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այն անգամ օսմանյան և պարսկական տիրապետության տակ ընկնելուց հետո էլ բազմաթիվ աղբյուրներում հստակորեն հիշատակվել է որպես Արմենիա կամ Էրմենիստան: Սա ևս մի կարևոր վկայություն է առ այն, որ պետականության կորստից հետո էլ հայ ժողովուրդն իր հայրենիքում կազմում էր ճնշող մեծամասնություն, ինչը ճանաչվում էր նաև բուրքական նվաճողների կողմից:

Ուստի ցավալի է, որ այսօր սփյուռքահայ որոշ պատմաբաններ և նույնիսկ հայաստանյան վերլուծաբաններ ու դիվանագետներ սկսել են Արևմտյան Հայաստանը փոխարինել «Արևելյան Անատոլիա» հնարովի հասկացությունով: Նրանք փաստորեն հլու-հնազանդորեն ի կատար են ածում Աբդուլ Համիդի 1880 թվականի հայտնի որոշումը: Դեռ ավելին՝ որոշ հայագետներ «Անատոլիա» հասկացությունը տարածում են արդեն ողջ Հայկական լեռնաշխարհի վրա⁴⁸:

Եթե նույնիսկ արևմտյան գիտական շրջանակներում՝ Թուրքիայի պետական քարոզչամեքենայի հետևողական աշխատանքի և կեղծարարության արդյունքում, որոշ դեպքերում նաև չիմացության հետևանքով, Արևմտյան Հայաստանի փոխարեն ամրագրվել է հնարովի «Արևելյան Անատոլիա» հասկացությունը, ապա մեզ համար այն անընդունելի է: Քանզի, Արևմտյան Հայաստանի փոխարինումն «Արևելյան Անատոլիա» տերմինով, նշանակում է Հայրենիքից հրաժարում՝ մեր իսկ կողմից, հայոց դարավոր պատմամշակութային ժառանգության մերժում, Հայոց ցեղասպանության ուրացում, նրա հետևանքների մոռացություն, Արևմտյան Հայաստանի հանդեպ հայ ժողովրդի իրավունքների թուրքական մերժողականության պաշտպանություն⁴⁹:

Ամփոփենք. Տեղանունները սույլ լեզվական փաստեր չեն, այլ նաև պատմագիտական ճշգրիտ ու անաչառ ապացույցներ: Վաղնջական ժամանակներից հիշվող հայկական տեղանունները լեզվական ամրակուռ վկայություններ են, որոնք բացահայտում են ողջ ճշմարտությունը Հայկական լեռնաշխարհի բնիկ տերերի մասին: Ուրեմն՝ հայկական տեղանունների պաշտպանության, պահպանման և վերականգնման խնդիրը մեզ համար ունի ռազմավարական անգնահատելի նշանակություն:

Թուրքիայի իշխանությունները հասկանալով, որ հայկական տեղանունները մի ողջ քաղաքակրթության արգասիք են և Արևմտյան Հայաստանում հայոց հնամենի գոյության խոստում վկաներ, չբավարարվելով այդ տարածքի իսկական տերերի ֆիզիկական ոչնչացմամբ, շարունակում են իրենց պատմամշակութային Եղեռնը՝ թիրախ դարձնելով նաև հայկական տեղանունները:

47 Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 373: Արևմտյան Հայաստանը մտացածին «Արևելյան Անատոլիայով» փոխարինելու թուրքական կեղծարարական վարժանքների նպատակների մասին մանրամասն տե՛ս Յ. Ն. Зотрабян, Орография Армянского нагорья, Ереван, 1979, ր. 14-15: Տե՛ս նաև՝ Է. Դանիելյան, Հին Հայաստանի պատմության հայեցակարգային հիմնահարցերը պատմագրության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 2003, N 3, էջ 30-37, նույնի Հայաստանն ու հայկական տեղանունները: Հայոց բնապատմական միջավայրի պաշտպանության գիտական առաջադրանքը, «Վեմ» համահայկական հանդես, 2009, թիվ 1(26), էջ 13-15:

48 Տե՛ս Suny, Roland Grigor, Loking toward Ararat: Armenia in Modern History, Bloomington: Indiana University Press, 1993. The Armenian People from Ancient to Modern times. Vol. 1, New York, St. Martin's Press, 1997, pp. 22, 26, 37. Ա. Այվազյան, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ, քննական տեսություն, Երևան, 1998, էջ 37-40:

49 Այդ մասին մանրամասն տե՛ս A. Ayvazyan “Western Armenia vs Eastern Anatolia”, Europe & Orient, Journal of the Institute Tchobanian, Paris, No. 4, 2007.

Այսպիսով, Օսմանյան կայսրությունում ու հանրապետական Թուրքիայում տեղանունների թուրքացման քաղաքականությունն ունեցել է մի քանի հանգրվաններ, որոնք ճշգրիտ կերպով համապատասխանել են այդ երկրում իրականացվող ցեղասպանական քաղաքականությանը.

առաջին, Օսմանյան Թուրքիայի հզորության շրջանում թուրք պետական պաշտոնյաներն ու պատմագիրները թեև յուրացնում և վերափոխում էին իրենց նվաճած երկրի տեղանունները, սակայն մինչև 19-րդ դարի վերջերը շարունակում էին օգտագործել Արմենիա կամ Էրմենիստան երկրանունը.

երկրորդ, ավելի ուշ շրջանում, մանավանդ՝ Հայկական հարցի միջազգայնացումից հետո, սկսվեց հետևողականորեն իրականացվել հայ և այլ քրիստոնյա ժողովուրդներին պատկանող բնակավայրերի անվանումների թուրքացումը.

երրորդ, երիտթուրքերի իշխանության շրջանում շարունակվեց և քեմալականների օրոք լայն թափ ստացավ տեղանունների համատարած թուրքացման քաղաքականությունը, որի թիրախը դարձան բոլոր ոչ թուրք ժողովուրդները.

չորրորդ, ներկայումս, Արևմտյան Հայաստանի հայաթափումից տասնամյակներ անց, երբ Թուրքիայի կառավարողները զգում են հայկական տարածքներում քրդական ինքնավարության ձևավորման վտանգը, նրանք որոշ չափով սկսում են փոխել իրենց քաղաքականությունը և մասնակիորեն վերականգնել առանձին բնակավայրերի կարծեցյալ թուրքական, բայց իրականում բնիկ հայկական անունները՝ ի հակակշիռ դրանց քրդացված տարբերակներին:

հինգերորդ, Ռ.Էրդողանի կառավարության որդեգրած այսպես կոչված «քրդական նախաձեռնության»⁵⁰ և «դրական անջատողականության»⁵¹ դեմ պայքարի շրջանակներում այսօր Թուրքիայի իշխանությունները երբեմն հիշատակում են երկրի բնակավայրերի նախկին, իբր՝ «քրդական» անվանումները, անտեսելով այդ տեղանունների իրական՝ հայկական ծագումն ու կառուցվածքը:

Այս ամենը ցույց է տալիս, որ

ա) տեղանունների նենգափոխումը եղել ու մնում է Թուրքիայի բոլոր ժամանակների իշխանությունների հեռահար նպատակներ հետապնդող ժողովրդագրական քաղաքականության կարևոր բաղադրիչը,

բ) նման հետևողական գործելակերպը փաստում է, որ վերջին երկու հարյուրամյակում Թուրքիայի ժողովրդագրական վիճակի փոփոխությունը ոչ թե տարերային, այլ կազմակերպված ու ծրագրավորված բնույթ է կրել,

գ) հայ և մյուս ժողովուրդների ներկայության մասին վկայող տեղանունների նենգափոխման քաղաքականության հստակ շարունակականությունն ապացուցում է Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանության և այլ ոճրագործությունների ծրագրավորված բնույթը:

Այս ամենի գլխավոր ապացույցը Առաջին աշխարհամարտի տարիներին երկրի ռազմաքաղաքական իշխանություններին առաքված՝ գլխավոր հրամանատարի տեղակալ, ռազմական նախարար Էնվեր փաշայի հրամանագիրն է,

50 Թուրքական լրատվամիջոցներում «քրդական նախաձեռնություն» (Kürt açılımı) են անվանում Էրդողանի կառավարության վերջին քայլերը քրդական հարցի, այսպես կոչված, լուծման վերաբերյալ:

51 «Դրական անջատողականություն» (Pozitif ayrımçılık) տերմինով Թուրքիայում նշում են, մասնավորապես, վերջին շրջանում քրդերին մշակութային սահմանափակ իրավունքներ տալու քաղաքականությունը:

որը պահվում է Թուրքիայի գլխավոր օսմանյան արխիվում⁵²: Այն հրատարակել են Շյուքրու Հանիօղլուն՝ Էնվեր փաշայի կյանքն ու գործունեությունը լուսաբանող իր գրքում⁵³, ինչպես նաև Այնան Յուքսելն իր «Սևծովյան ուսումնասիրություններ» մենագրության մեջ⁵⁴:

Թարգմանաբար ներկայացնում ենք Էնվեր փաշայի ստորագրած հրամանագիրը.

Հրամանագիր (Emirname)

1. Օսմանյան երկրում հայկական, հունական, բուլղարական և այլ ոչ մահմեդական ժողովուրդներին պատկանող նահանգի, գավառի, գյուղաքաղաքի, գյուղի, սարի, գետի... և այլ բոլոր անունների վերածումը թուրքերենի անհրաժեշտ է: Արագորեն օգտվելով հարմար պահից՝ այս նպատակի իրականացման համար ձեր աջակցությունն ենք հայցում:

2. Ձեր իրավասության տակ գտնվող տարածքում զինվորական հրամանատարության և վարչական պաշտոնեության հետ միանալով՝ թող կազմվեն անվանափոխության համապատասխան ցուցակներ, և նահանգի, գավառի, գյուղաքաղաքի կենտրոններն ընդգրկող այս ցուցակները հնարավորինս շտապ մաս առ մաս ներկայացվեն: Գլխավոր-հավաքվող ցուցակներն ուսումնասիրելուց ու համաման անունները փոխհամաձայնությամբ փոփոխելուց հետո պետք է ուղարկվեն ներքին գործերի և կապի նախարարություններ՝ ընդհանրացման և կիրառության:

3. Անհրաժեշտ է, որ նոր անվանումներն արտահայտեն աշխատասիրությամբ մշտապես ընդօրինակելի և չափանիշ հանդիսացող ու գովեստներով փառաբանված մեր զինվորականության պատմությունը: Պետք է հիշել ինչպես ներկա, այնպես էլ անցյալ պատերազմական իրավիճակներում հայտնված և, ըստ այդմ, հատուկ փառաբանված դրվագները: Եթե դա հնարավոր չէ, ապա պետք է հիշատակվեն ամենաբարձր բարոյականության տեր և իրենց երկրին անգնահատելի ծառայություններ մատուցելիս զոհված անձնավորությունները: Կամ էլ պետք է գտնվեն այնպիսի անուններ, որոնք բնորոշ են տվյալ տեղանքի բերքին, արտադրանքին, առևտրին կամ աշխարհագրությանը:

Ի վերջո, դպրոցում ուսուցիչներն իրենց աշակերտներին մեր հայրենիքի տարբեր անկյունների մասին դասավանդելիս՝ պետք է կարողանան տվյալ վայրի փառապանծ պատմությանը, կլիմային, բերքին, առևտրին և արվեստին նվիրված օգտակար թեմաներ գտնել: Բացի այդ՝ եթե օտար լեզվով վաղուց ի վեր ընդունված անունների հանկարծակի փոփոխությունը լինի անհարմար անուններով, այն առաջ կբերի որոշ սխալներ և պատճառ կդառնա, որ բնակչության շրջանում հին անունների օգտագործումը շարունակվի:

Հետևաբար՝ նոր անունները պետք է ընտրել՝ այս ամենը նկատի ունենալով: Իսկ եթե չհաջողվի մաման սկզբունքների հիման վրա անուն գտնելը, այդ դեպքում, օրինակ՝ Էրեղլին անվանել Էրիքլի կամ էլ Էրաքը, Գալիբոլուն՝ Վելիբոլու, այսպիսով, չի խախտվի ընդունված նախկին անվան հիմքը:

Գլխավոր հրամանատարի տեղակալ՝ Էնվեր,
23 Քանուն-ը էվվել, 1331 /5 հունվարի, 1916թ./

52 Տե՛ս Başbakanlık Osmanlı Arşivi, Dâhiliye Nezâreti, İUM, nr. 48/17, lef: 2.

53 Տե՛ս M. Şükrü Hanioglu, "Enver Paşa", DIA, XI, İstanbul, 1995, ss. 261-264.

54 Տե՛ս A. Yüksel, Doğu Karadeniz Araştırmaları, ss. 21-22.

Summary

THE POLICY OF TURKIFICATION OF THE ARMENIAN TOPONYMS IN THE OTTOMAN EMPIRE AND THE REPUBLIC OF TURKEY

The decree issued by Enver Pasha, the Minister of War, January 5, 1916

Lusineh S. Sahakyan

Toponyms represent linguistic characteristics with important historical and political significance. The Young Turk rulers in 1916 Ottoman Empire and those in the Republic of Turkey realized the strategic importance of the toponyms and persistently implemented policies of distortion and appropriation. With the aim of assimilating the toponyms of the newly conquered territories, the Ottoman authorities translated them into Turkish from their original languages or transformed the local dialectal place-names by way of distortion to make them sound like Turkish word-forms. Yet another method of appropriation was that of the etymological misinterpretation of the toponyms in question. A widespread method was also renaming the places and discarding the former place-names altogether. The focus of the present article is the place-name transformation policy of the Ottoman Empire as well as the Republic of Turkey; the Ottoman (Latin-transcript)-Armenian translation of the decree, dating January 5, 1916, issued by Enver Pasha, the Minister of War, is presented in this article for the first time in English, Armenian and Russian translations. It concerns the transformation of “non-Muslim” place-names. The article also deals with the artificial term of “Eastern Anatolia” that was coined to replace Western Armenia, the political objectives of the pro-Turkish circle, as well as the aftermath of putting the mentioned ersatz term into circulation.